

**ՄԱՐԶԻԿՆԵՐ ԴԱՐԻՈՒՄ ՄԱԼԻԿ ՄԱՔԳԻՆ,
ԶԱՍԹԻՆԻԱՆ ԼՈՒԻՍ ԶԵՍԱՓԻՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԱՐՏԱԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2025 թ. № -Ա

ՄԱՐԶԻԿՆԵՐ ԴԱՐԻՈՒՄ ՄԱԼԻԿ ՄԱՔԳԻՆ, ԶԱՍԹԻՆԻԱՆ ԼՈՒԻՍ
ԶԵՍԱՓԻՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և
զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ
մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019
թվականի փետրվարի 15-ի № 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ
ոչ 2.1-ին ենթակետերով և 3-րդ
կետով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային
կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Հայաստանի
Հանրապետության քաղաքացիությունը ստացած և բասկետբոլի Հայաստանի
Հանրապետության հավաքականի անդամ հանդիսացող՝

1) Դարիուս Մալիկ
Մաքգիին (ծնված՝ 1997 թվականի մարտի 21-ին, զինհաշվառումը՝ ՀՀ ՊՆ
ՉԼԶՀ ծառայություն),

2) Ջասթինիան Լուիս
Ջեսսափին (ծնված՝ 1997 թվականի մարտի 21-ին, զինհաշվառումը՝ ՀՀ ՊՆ ՉԼՉ ծառայություն):

2. Շարքային
կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Հովհաննես Արտակի Մարգարյանին (ծնված՝ 1999 թվականի սեպտեմբերի 26-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հնոցավան 5 շարք, տ. 7, զինհաշվառումը՝ Շիրակի մարզի 2/4, հրաձգության Եվրպայի 2025 թվականի առաջնության հաղթող՝ 1-ին մրցանակակիր, նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 18.07.2024 թ. N 1104-Ա որոշմամբ՝ մինչև 26 տարին լրանալը՝ 26.09.2025 թ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝
ՓԱՇԻՆՅԱՆ

Ն.